Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 24-ի N 1450-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Պատասխանատու գերատեսչությունը	Վերջնաժամկետը
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
1.	Մրցակցային առավելություն և ներդրումային ներուժ ունեցող ոլորտների ու այդ ոլորտներում արժեշղթաների (value chains) ուսումնասիրություն՝ պոտենցիալ ներդրողներին ուղղորդելու նպատակով	Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ)	Տարեկան
2.	Ներդրումային միջավայրի բենչմարկինգի իրականացում՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների վարկանիշային աղյուսակների պարբերական մշտադիտարկում, մրցակից երկրների փորձի ուսումնասիրություն՝ ներդրողներին բարենպաստ պայմաններ առաջարկելու նպատակով	Էկոնոմիկայի նախարարություն Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբեր
3.	Ներդրողներին ուղղված ներդրումային քաղաքականության ամփոփագրի (Investment Policy Statement) մշակում և հրապարակում	Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի հունիս

4.	Ներդրումների, այդ թվում՝ արտոնությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրում	Էկոնոմիկայի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե ՆԱԿ (համաձայնությամբ)	2025 թվականի դեկտեմբեր
5.	Հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունում (հողերի նպատա-կային նշանակության փոփոխության հետ կապված ընթացակարգերի պարզեցում և խոչընդոտների վերացում)	Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Կադաստրի կոմիտե	2024 թվականի դեկտեմբեր
6.	Օտարերկրյա ներդրումների ռեեստրի ստեղծում	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Պետական եկամուտների կոմիտե ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբեր
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
7.	«Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի նոր խմբագրությամբ «Ներդրումների մասին» վերնագրով օրենքի ընդունում	Էկոնոմիկայի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբեր
8.	«Ներդրումների ներգրավման աջակցության մասին» օրենքի ընդունում	Էկոնոմիկայի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե	2024 թվականի դեկտեմբեր
9.	Կապիտալի շուկա դուրս եկող և ՀՀ դրամով արժեթղթեր թողարկող ընկերությունների մուտքը խրախուսելուն միտված համալիր միջոցառումների իրականացում: Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագրի իրականացում	Էկոնոմիկայի նախարարություն Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Շարունակական
10.	Առնվազն 1,000,000,000 (մեկ միլիարդ) ԱՄՆ դոլարի չափով կառավարվող ակտիվներ ունեցող մասնավոր ներդրումային ֆոնդերում ներդրումների իրականացման	Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2023 թվականի դեկտեմբեր

	համաֆինանսավորման մեխանիզմի ստեղծում՝ պետության կողմից ներդրումային ֆոնդերում փայերի ձեռքբերման եղանակով: Ներդրումային ֆոնդերում ներդրումներ կատարելու մասին ծրագրի ընդունում		
11.	Հետազոտության և մշակումների (R&D) խթանման նպատակով աջակցության վերաբերյալ իրավական ակտի ընդունում	Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն Պետական եկամուտների կոմիտե	2024 թվականի հունիս
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ			
12.	Պետական մարմինների և ներդրողների միջև ներդրումների շրջանակներում փոխգործակցության մեխանիզմի վերաբերյալ իրավական ակտի ընդունում	Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ) «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2023 թվականի դեկտեմբեր
13.	Ներդրումների խթանման ոլորտում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կարողությունների հզորացում՝ վերապատրաստումների միջոցով	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական
14.	Ներդրումների խթանման ոլորտում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, այդ թվում՝ առևտրային ներկայացուցիչների կարողությունների հզորացում՝ վերապատրաստումների միջոցով, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, այդ թվում՝ առևտրային ներկայացուցիչների համար հստակ ուղեցույցների մշակում ներդրողների հետ աշխատանքի համար	Արտաքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական

15.	Ներդրումային խորհուրդ ստեղծելու, դրա կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին իրավական ակտի ընդունում (Միջգերատեսչական մարմին, որի նպատակն է Կառավարության կողմից ներդրողներին օժանդակության ցուցաբերումը)	Էկոնոմիկայի նախարարություն	2023 թվականի դեկտեմբեր
16.	ՆԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ խորհրդակցական մարմնի (Advisory Board) ստեղծում՝ օտարերկրյա ներդրողների մասնակցությամբ	Փոխվարչապետի գրասենյակ Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբեր
17.	«Ներդրողի օր» ամենամյա համաժողովի իրականացում	Փոխվարչապետի գրասենյակ Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ)	Տարեկան
18.	Ներդրումների խթանման մարմնի միջազգային չափանիշներին համապատասխան կայքի ստեղծում և գործարկում, որտեղ համապարփակ տեղեկություններ կտրամադրվեն Հայաստանի Հանրապետության ներդրումային պոտենցիալի մասին ըստ ոլորտների, արտոնությունների և տարածաշրջանների, ինչպես նաև նախատեսված կլինի ուղիղ ներդրումների իրակա-նացման համար հարմարավետ, անվտանգ հարթակ	Էկոնոմիկայի նախարարություն Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի մարտ
19.	ՆԱԿ-ի ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների զարգացում	Փոխվարչապետի գրասենյակ Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ)	Շարունակական
20.	Fortune ամսագրի կողմից հրապարակվող «Fortune Global 500» համաշխարհային 500 խոշորագույն ընկերությունների վարկանիշային ցուցակում ընդգրկված առնվազն 3 ընկերությունների Հայաստանի	Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբեր

	Հանրապետությունում ներկայացուցչության ստեղծմանն աջակցություն	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)	
21.	Միջազգային հեղինակավոր Forbes պարբերականի կողմից հրապարակվող «The World's Most Valuable Brands» վարկանիշային ցուցակում ընդգրկված առնվազն 30 ապրանքանիշների Հայաստանի Հանրապետությունում ներկայացվածության ապահովման աջակցություն	Էկոնոմիկայի նախարարություն ՆԱԿ (համաձայնությամբ) «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ